

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
գրանցված է)
ԻԱՄ խորհրդի
09/07/2012թ թիվ 9-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը
ՀՀ կենտրոնական բանկում
«18» նոյեմբերի 2015թ

Փոփոխված է 23/12/2013թ թիվ 50-Լ որոշմամբ
նախագահ

ՀՀ կենտրոնական բանկի

31/03/2015թ թիվ 58-Լ որոշմամբ

23/06/2015թ թիվ 73-Լ որոշմամբ

29/10/2015թ թիվ 93-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
Զավաղյան
ԻԱՄ խորհրդի նախագահ

_____ Արթուր

_____ Ներսես Երիցյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-038

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ
(ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ)

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնները սահմանում են ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացին ներկայացվող պահանջները, որոնցով պետք է ղեկավարվեն Ընկերությունները (ներառյալ՝ իրենց կողմից լիազորված անձինք և (կամ) ապահովագրական գործակալները) Բյուրոյի խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 10-Լ որոշմամբ հաստատված «ԱՊՊԱ վկայագիրը կազմելու և լրացնելու հրահանգ» RL 1-002 կանոնների համաձայն ԱՊՊԱ վկայագիրը լրացնելիս:

2. Սույն կանոնների նպատակն է ԱՊՊԱ պայմանագրերի կնքման գործընթացին ներկայացվող պահանջների միջոցով՝

1) ԱՊՊԱ պայմանագրերի լրացման և կնքման գործընթացի արդյունավետության բարձրացումը,

2) Տեղեկատվական համակարգ մուտքագրվող տվյալների ճշգրտության և ամբողջականության ապահովումը՝ հնարավորինս բացառելով այս ոլորտում կեղծիքների իրականացումը:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄԱՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

1) **Բյուրո**՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ,

2) **Ընկերություն**՝ Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերություն,

3) **ՃՈ**՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն,

4) **Տեղեկատվական համակարգ**՝ ըստ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

5) **Կարգ**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 326-Ն որոշմամբ հաստատված «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետը և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգ»,

6) **ՏՄ**՝ ավտոտրանսպորտային միջոց, որի օգտագործումից բխող պատասխանատվությունը ենթակա է պարտադիր ապահովագրության:

ԳԼՈՒԽ 3

ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Ընկերությունները նախքան ԱՊՊԱ պայմանագիր կնքելը (ներառյալ՝ իրենց լիազորված անձանց և (կամ) ապահովագրական գործակալների միջոցով), բայց ոչ շուտ, քան պայմանագրի կնքումից մեկ օր առաջ, Կարգով սահմանված կարգով հարցում են կատարում Տեղեկատվական համակարգ՝ համապատասխան SU-ի և դրա սեփականատիրոջ վերաբերյալ Կարգի Հավելված 2-ի Ձև 8-ով սահմանված տեղեկատվությունը ստանալու համար:

5. Ընկերությունը սույն կանոնների 4-րդ կետի համաձայն կատարված հարցման արդյունքում ստացված տվյալները համեմատում է SU-ի հաշվառման վկայագրի, ինչպես նաև սեփականատիրոջ անձը հաստատող, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման փաստաթղթում արտացոլված տվյալների հետ:

6. Սույն կանոնների 5-րդ կետով նախատեսված համեմատության արդյունքում տվյալների անհամապատասխանություն չհայտնաբերվելու դեպքում ԱՊՊԱ վկայագրի համապատասխան դաշտերը լրացվում են Տեղեկատվական համակարգից ստացված տվյալների հիման վրա: Սույն կանոնների 5-րդ կետով նախատեսված համեմատության արդյունքում տվյալների անհամապատասխանություն հայտնաբերվելու, ինչպես նաև սույն կանոններով սահմանված կարգով կատարված հարցման արդյունքում որևէ տվյալ չստացվելու դեպքում ԱՊՊԱ վկայագրում համապատասխան դաշտերը լրացվում են ապահովագրի կամ նրա լիազորած անձի ներկայացրած փաստաթղթերում արտացոլված տվյալների հիման վրա:

6.1. Ընկերությունները նախքան ԱՊՊԱ պայմանագիր կնքելը (ներառյալ՝ իրենց լիազորված անձանց և (կամ) ապահովագրական գործակալների միջոցով), բայց ոչ շուտ, քան պայմանագրի կնքումից մեկ օր առաջ, Կարգով սահմանված կարգով հարցում են կատարում Տեղեկատվական համակարգ՝ Բոնուս-Մալուս դասերի վերաբերյալ Կարգով սահմանված տեղեկատվությունը ստանալու համար: ԱՊՊԱ վկայագրում Բոնուս-Մալուս դասերը լրացվում են բացառապես ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ստացված Բոնուս-Մալուս դասերի համաձայն:

6.2. Ընկերությանը (ներառյալ՝ իրենց լիազորված անձանց և (կամ) ապահովագրական գործակալների միջոցով հանդես գալու դեպքերի) արգելվում է ԱՊՊԱ պայմանագրի կնքումը՝ առանց ԱՊՊԱ վկայագրի «ID կոդ» մասում սահմանված կարգով գեներացված նույնականացման համարի առկայության:

ԳԼՈՒԽ 4

ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԾՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7. Ընկերության անունից ԱՊՊԱ պայմանագրերի կնքման գործընթացում ներգրավված ֆիզիկական անձը՝ ներառյալ ապահովագրական գործակալի պատասխանատու անձը, ԱՊՊԱ վկայագրերի լրացման համար պետք է՝

1) ապահովված լինի առնվազն համակարգչով, տպող սարքով, Ընկերության տեղային ցանցին միանալու հնարավորությամբ (ինտերնետով, լարային միացմամբ կամ որևէ այլ

եղանակով), ԱՊՊԱ վկայագրերի լրացման համար անհրաժեշտ Ընկերության ներքին ծրագրային ապահովմամբ:

2) ԱԱՄՊ համակարգի օգտագործմամբ կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի կնքման պարագայում՝ նաև նախապես մասնակցած լինի վերջինի միջոցով ԱՊՊԱ պայմանագրերի կնքման վերաբերյալ Բյուրոյի կողմից տրված ուղեցույցների հիման վրա Ընկերության կողմից կազմակերպված սեմինարներին և Ընկերությունում գործնական թեսթավորման դրական արդյունքներով ունենա Ընկերության կողմից տրված հավաստագիր (հաստատում/թույլտվություն) ԱԱՄՊ համակարգի միջոցով ԱՊՊԱ պայմանագրերի կնքման համար: *(7-րդ կետը փոփ. է 23/06/2015թ թիվ 73-Լ և 29/10/2015թ. թիվ 93-Լ)*

ԳԼՈՒԽ 5

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Սույն կանոնների 4-րդ և 6.1-րդ կետերով նախատեսված հարցման գործընթացներին ապահովագրական գործակալների ներգրավված լինելու դեպքում համապատասխան Ընկերությունն ապահովում է իր և տվյալ գործակալների միջև կապի պաշտպանվածությունը: Սույն կետով նախատեսված դեպքերում օգտագործվում է «HTTPS» արձանագրությունը:

9. Սույն կանոնների 3-րդ գլխով սահմանված գործընթացում ներգրավված անձինք համապատասխան հարցումն իրականացնում են իրենց տրված հատուկ ծածկանվան և գաղտնաբառի մուտքագրման միջոցով:

10. Սույն կանոնների 9-րդ կետով նախատեսված գաղտնաբառերի նվազագույն երկարությունը պետք է լինի ութ նիշ, ընդ որում, դրանք պետք է պարտադիր ներառեն թվեր, փոքրատառեր, մեծատառեր:

11. Սույն կանոնների 3-րդ գլխով սահմանված գործընթացում ներգրավված անձանց տրամադրված գաղտնաբառերը պետք է առնվազն վեցամսյա պարբերականությամբ փոփոխվեն:

12. Ընկերությունները առնվազն յոթ տարի ժամկետով (եթե իրավական այլ ակտերով պահպանման առավել երկար ժամկետ սահմանված չէ) էլեկտրոնային եղանակով պահպանում են իրենց կողմից կատարված բոլոր հարցումները, ներառյալ՝ հարցումը կատարած աշխատակցի, լիազորված անձի և (կամ) ապահովագրային գործակալի վերաբերյալ տվյալները: Ընկերությունները սույն կետով սահմանված կարգով պահպանում են նաև իրենց կողմից կատարված բոլոր անհաջող մուտքերի վերաբերյալ տեղեկատվությունը:

ԳԼՈՒԽ 6

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13. Սույն կանոններն ուժի մեջ են մտնում 2012 թվականի հուլիսի 15-ին, բացառությամբ սույն գլխով նախատեսված դեպքերի:

14. Սույն կանոնների 12-րդ կետն ուժի մեջ է մտնում 2012 թվականի օգոստոսի 1-ին:

15. Սույն կանոնների գործողությունը չի տարածվում մինչև 2012 թվականի օգոստոսի 1-ը ձեռագիր եղանակով լրացվող ԱՊՊԱ պայմանագրերի կնքման գործընթացի վրա:

16. Ընկերությունները պարտավոր են 2012 թվականի հուլիսի 15-ից մինչև 2012թ. օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրենց անունից կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի առնվազն 50 տոկոսը կնքել սույն կանոններով սահմանված կարգով: